

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 2-ին, Ավագ շաբաթ.—Ճրագալոյց Զատկի:

Այսօր Մայր տաճարում, երեկոյան ժամը 17-ին, Ճրագալույցի ս. պատարագ է մատուցում Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսում (տես էջ 46): Ս. պատարագից առաջ հոգևոր ճեմարանի ուսանողները ընթերցում են Դանիելի գիրքը:

Հավարտ ս. պատարագի, Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի հանդիսադրությամբ, կատարվում է Զատկի նախատոնակը:

Ավելի ուշ մայրավանքի սեղանատանը օրհնվում է Մայր Աթոռի աղն ու հացը, և միաբանությունը ճաշակում է նավակատիքի բարիքները:

* * *

Ապրիլի 4-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբդ. Զիրեկյանցը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Ապրիլի 7-ին, հինգշաբթի.—Աւետումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

* * *

Ապրիլի 9-ին, շաբաթ.—Յիշատակ գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 10-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Շահե արքեպս. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 16-ին, շաբաթ.—Յինանց:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 17-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 23-ին, շաբաթ.—Յինանց:

Այսօր Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 30-ին, շաբաթ.—Յինանց:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 1-ին, կիրակի.—Տօն Երեւման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը: Հոգևոր ճեմարանի ուսանողության կատարմամբ հնչեց «Հրաշափառ» հոգեպարար շարականը, և Նորին Սրբությունը, Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ, մուտք գործեց Մայր տաճար:

Ս. ՀՌԻՓՍԻՄԵ

* * *

Մայիսի 7-ին, շաբաթ.—Այսօր Ս. Ծողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Կորյուն քհն. Ֆեներջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 8-ին, կիրակի.—Այսօր մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողությունից հետո Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանն ընթերցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը՝ նվիրված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նոր Սահմանադրության կազմելուն (տես էջ 27):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 9-ին, երկուշաբթի.—Այսօր Ս. Հռիփսիմե եկեղեցում ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Վաչե ծ. վրդ. Իգնատիոսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 12-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի առթիվ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 14-ին, շաբաթ.—Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 15-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Մյուռոն վրդ. Գրվրգյանը:

* * *

Մայիսի 21-ին, շաբաթ.—Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Սեպուհ ծ. վրդ. Սարգիսյանը:

*
* *

Մայիսի 22-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

*
* *

Մայիսի 28-ին, շաբաթ.—Ոգեկոչումն հռչակման Հայաստանի Հանրապետութեան 1918 թ.:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանը: Հավարտ ս. պատարագի հոգեշնորհ Հայր Սուրբը քարոզ խոսեց:

Ապա կատարվեց «Հանրապետական մաղթանք»՝ նվիրված Հայաստանի Հանրապետության հռչակմանը:

*
* *

Մայիսի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Սեպուհ ծ. վրդ. Սարգիսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց «Հանրապետական մաղթանք:

*
* *

Մայիսի 30-ին, երկուշաբթի.—Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց:

Այսօր Ս. Հռիփսիմե եկեղեցում, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

*
* *

Մայիսի 31-ին, երեքշաբթի.—Սրբոց կուսանացն Գայիանեանց:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Գուրգեն ավ. քհն. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց: